

ՕՇԱԿԱՆ ԿԸ ԴԱՏԷ

Հատուածներ Օշականի նոր մէկ գործէն, որ մամուլի տակ է արդէն եւ յոյս պիտի տեսնէ Ապրիլին: Հայրենիքն ու հայրենի մշակոյցը ամէն բանէ վեր դասող մտաւորական նոր սերունդին համար, խորհրդածութեանց ուժգին քելադրանք մը կը կազմեն շղթայագերծ պոռթկումով գրուած այս տողերը, մնալով հեռու, մնալով բարձր՝ բաղաճական կամ հատուածական ամէն նկատումէ, ստորագրողին խորունկ հայրենասիրութեամբը երաշխաւորուած: Պարագայական խորագիր մըն է մերինը:

ՀԱՅՐԵՆԻ ԲԵՐՔԸ

ՔԱՌԱՍՆԱՄԵԱՅ ՎԱՍՏԱԿԻՆ ՈՒԺՈՎ



Սովորութիւն է տարագրութիւնը տեսնել կոտորածի ու կրակի շառայլին ու ջայլին ընդմէջէն: Անշուշտ չեն հերքուիր դանակն ու հրդեհը, բայց մոռցուած է նոգեղացք անկէ անցնողներուն: Մեր Սփիւռքը այնքան յագ է մեր նիւթական տազնապանքով, որ ոչ գրողը, ոչ կրօնականը, ոչ ալ մեր ժողովուրդին գոյութեան ճարտարապետները, ատեն գտած են դրադելու մեր հողին վրայ կախարուած աւելի մեծ, սեւ կոտորածով: Կը նայիմ նորերուն, ու անոնց անըմբռնելի կարծրասրտութիւնը երբ կը ջանամ փրկուծել, ինծի կուգան անոնց մանկութեան ու պատանութեան հարազատ, ուղղափառ դժոխքները ու ան միւս անորակելի դժոխքը, զոր արեւմտեան մշակոյթը, առաջին մեծ պատերազմը շահող բանակներուն այնքան սրտառուչ գոհողութիւնը մեր հաշտոյն կազմակերպեց, մեզ լքելով մեր դահիճներուն վայելքին: Ահա Սփիւռքին ամէնէն ծանր տազնապը:

Այնքան մօտիկ ազատութեան, դայն շօշափելէ վերջ նոյնիսկ, մենք մեզ կը գտնենք, նետուած չորս հովերուն, մեր երկրէն, մեր բարեկամներէն ու րացուած ու սատկելու համար ամայքի հանուած գրաստներու պատկերին տակ: Մեր հարցը լուծելու, ամերիկեան, անգլիական, գաղիական, ռուսական — կարճ բառով մը՝ քրիստոնէական ամենարուժ միջոցը — մեր բնաջնջումը, մեր մէջը, մեզմով, առանց բանակի ու առանց հրդեհի, մեր հողին մէջ ներարկելով թոյները մեզ մեզմէ գանելի դարձնող...: Որքան սեւ ապրեցան մեր տղաքը: Կ'ընդունիմ: Որքան սեւ ապրելու վրայ է հիմա անոնց մարմինէն ետք, հողին: Ահա թէ ինչու երբ այնքան պարզ է մեզ, մեծերուս համար գինը մեր գլուխներուն, Սփիւռքը ըլլայ շուար այդ գինին իրական գինին շուրջը ու կասկածի ոչ միայն իրմէն, այլ մեզմէ, քանի որ կը լսէ ու կ'ապրի այնքան խայտաբղէտ օրակարգներ: Չէ՞ որ ընթացիկ իմաստութեան զօրաւոր քարոզ է հիմա հունսէն չորցնել մէկ մասը Սփիւռքին... երբ մեր յաւիտենական թշնամին արդէն խաղաղ մարտեր է իր ոճիրը ու կը զուարճանայ մեր սա իւրարու դէմ ճամարտակուած հերոսութենէն: Ան է միայն արժանին հունտէն չորցուելու, ո՛վ մեծիմաստ դասախօսներ, և ոչ թէ ձեր արիւնին սրբազան ծը-

նուենդները որոնք իրենց ճակատագիրը կրելու դառնութեանց վրայ, անս ըստիպուած են աւելցնելու ուրիշ խուսափելի տրամութիւններ: Ան է մեր ցեղին ներկան, մանաւանդ ապագան տամոկլեան սուրի մը տակ պահողը: Չեր դասախօսի հոգեբանութիւնը, ձեր վերանորոգ քարոզները: Չեր վերածնունդին փառքերը: Ասոնք չեմ արհամարհեր անշուշտ: Ու այ դագրած եմ տառապելէ ձեր քերթուածներուն միջակութենէն: Ու չեմ գարմանար ձեր խոշոր հարատւութեանց վրայ, քանի որ կայաններ ունիք առախոյի, ջրանցքներ բացած էք ամայքները կանարորոց:

Բայց ինչպէ՞ս չէք հասկնար թէ ձեր գումարին կէսին մատեցող մարդերու բանակ մը անգիտելու ամբարշտութիւնը մեր մէջ կը մշակէք՝ մեզ իրարու դէմ հանելով, իբր թէ մեր պառակտումները, կորանքները չբաւէին մեզի: Ու անխուսափելին: Խրամսը՝ եղբայրը եղբորմէն ոչ թէ դատող, այլ օտարի, թրչնամի վերածող: Հայրենիքի մենաշնորհը դոր կը շահագործեն այնքան աւելորդ անգթութեամբ մը: Իրաւ, իրաւ կ'ըսեմ ձեզի որ, բացի դաւաճաններէն — ու թիւր անոնց տասնեակը չ'անցնիր, որով դուրս որեւէ ժողովուրդի պատկանելիութենէն — Սփիւռքի մէջ չկայ հայ մը որ տարբեր մտածէ այդ հայրենիքին իմաստը ըմբռնելուն մէջ: Ոչ ոք կ'ամբաստանեմ: Հայրենիքէն դարձողներ մեզի շշուկով իմացուցին թէ հոն մեր մտածումներէն տարբեր մտքի գրութիւններ կ'իշխէին: Անշուշտ քաղաքական անտեսական իմաստասիրութիւններ չէին ծածկուիր այդ ակնարկութեանց ետին: Այլ այն պարզ իրողութիւնը որ մեզի, մեծերուս — տարիքով — համար անըմբռնելի, երիտասարդներու մօտ դարձեր է սանկ ու նանկ բան մը, եթէ չէ վերածուեր կանանչ ատելութեան: Այդ իրողութիւնը՝ Սփիւռքը ձգելն էր իր ճակատագրին, դայն անգիտելու համար պատրուակներ ոսկեղօծելէ վերջ: Կուսակցական հակամարտութիւնները մեզմէ չեն գար, այլ գինն են այդ շքեղ անտարբերութեան: Խորունկ է անշուշտ վէրքը: Բայց անոր տարողութեան վրայ շահարկին է նորութիւն: 1880-ին, թուրքին ընդդէմ, թերեւս ուրիշ ալ սպառնալիքներու՝ արեւելահայերը կարօտագին կ'օգնէին մեզի: 1850-ին այդ օգնութիւնը մենք արձանագրեր ենք: Արեւելահայերը 1917-էն վերջ երբ ստիպուած են մեզ լքելու, կը հասկնանք գիրենք: Չենք հասկնար, այդ լքումին մեզ պատասխանատու նկատելու սովեստութիւնը: Ու չենք հասկնար թէ Սփիւռքը ինչո՞ւ այսքան պարզ սա վիճակը, իր կարգին, կ'օգտագործէ ակումբի մը մէջ հանդէս մը, դպրոցի մը մէջ դասի ատու մը, լրագրի մէջ փայլուն յօդուածի մը փառքերը ապահովելու նանրագին, մեղապարտ յետին մտածումներով: Կարգացէք մեր մամուլը ու ըսէք թէ ինչու այս մեքենան այնքան ծանր բումբեր կ'արձակէ եղբորը գոյութեան, պատիւին ու մտածման գրութիւններուն դէմ: Չէ՞ր կարելի հասարակաց եղբայրութիւնը, իրաւ առքին մէջ մեր հայրենիքին, զգացում՝ որուն համար մեր երիտասարդութիւնը կէս դար է անա արիւնը, խիւլքը, կորովը չսակարկեց, ու այդ նուիրումին համար այսօր արժանի կը համարուի հունցէն չորցուելու:

*

Իմ գրականութեան մէջ լման երակ մը, — Մոռցուած բաներ, Անգղիոյ կտուցին սակ, Սերմնացան, Համապատկեր, ու գրական բոլոր իմ վերլուծումները իրենց շրջանակ, հող ու ենթահող ունին առաւելագանց չափով մը, ա.) Սփիւռքը, բ.) նուազ ընդարձակութեամբ Հայոց Հայրենիք, այսինքն մեր ճակատագիրն ու մեր պատմութիւնը, գ.) Մեր ներկայ հայրենիքը, որուն տուէք ձեր ուղած վերագիրը: Այս հիմնական ազդակներէն ամէնէն վերջինին համար իմ տողերը միշտ ալ ունեցեր են զգաստ, ժուժկալ նկարագիր այն գլխաւոր փաստին պատճառով, որ իմ գրելու կերպին մէկ պարտադրանքն է իմ արդիւնքին վրայ: Չեմ խօսիր իմ չգիտեցած, քերի գիտեցած որեւէ մէկ բանի վրայ: Ձիս կը մեղադրեն որ չեմ խանդավառ մեր հայրենիքով: Ու կը զրգարտեն: Մեր հայրենիքին, Հայաստանի համալսարանին պատմական, գիտական, լեզուական, հաւաքչական աշխատանքին վրայ իմ հպարտութիւնը, հիացումը, քան տարի առաջ ես պօռայեր եմ առանց մէկէ մը հրաւեր ստացած ըլլալու: Մեր հայրենիքին մէջ ճշտորոգ գրական վասակին (բառը կ'ընդգրկէ վէպը, բանաստեղծութիւնը,

Թատրոնը, քննադատութիւնը) վրայ իմ անտարբերութիւնը, տառապանքը, նոյնիսկ զայրոյթը ես չեմ վարանիր նոյն անկեղծութեամբ ամէն տեղ ու ամէն առիթով գարձեալ պօռալու։ Ողբերգականը ան՝ որ մարդիկ կը մոռնան, կ'անտեսեն ինչ որ նպաստաւոր չեն գտներ, չեմ բսեր՝ իրենց շահերուն, այլ կ'ըսեմ՝ իրենց պատրանքներուն։ Ու տեղն է լրջանալու, ո՞ր ժամուն պիտի սպասէր վտանգուած։ Օշականը իր հիացումը նմանապէս պօռալու գրական այդ վաստակին համար, ինք որ հայ գրականութեան մեծ մշակներուն վրայ իր հիացումը չէր սակարկեր։ Ու օրինակներ։ Եօթը հովերուն յանձնուած գովեստը Վարդանանիին, պահ մը դիւ բերաւ վարանումի, այդ մեծդի հատորը վերձանելու։ Դերենիկ Դէմիրճեանին գործը գատեր էի քսան տարի առաջ։ Իր տաղանդին կարելիութիւնները քաջածանօթ, անբաւական էի գտեր վէպին համար։ Իր Քաջ հուզուրը, սանկ ու նանկ կատակերգութիւն մըն էր որուն վըրիպանքը վերագրեր էի Թեղին, մանսալին։ Պատմական վէպ — Օ՛ն անդր։ Հոն ուր վրիպած էին աստուածային Բաֆֆին, պարկեշտ, խղճամիտ, գրագէտ Մուրացանը, հաւատաւոր ու արեւմտեան վէպէն այդ սեռին յայնօրէն հայորդ Ծերենցը, հոն Դերենիկ Դէմիրճեանը, միշտ իր տաղանդին իսկ ցուցմունքով վճռական վրիպանքի էր դատապարտուած։ Հատորը, իր առաջին յիսուն էջերուն, կապար դարձաւ ձեռքերուս մէջ ու աչքերս մերժեցին այդ բառակոյտը։ Շարաթ մը վերջը միշտ գովեստի խթանին տակ, կրկին գսակցի զգայարանքներուս մերժումը, առի դիրքը ձունկերուս։ Ուրիշ յիսուն էջ մը իմ տառապանքը փոխեց զայրոյթի։ Դերենիկ Դէմիրճեան վիպասան մը չէր ծնած։ Ու գիտեմ թէ մնացեալ չորս հարիւր էջերուն մէջ անիկա պիտի զարգացնէ միայն ու միայն իր վրիպանքը։ Մի բսէք թէ անիրաւ կամ չաւարտած գործ մը այսպէս ի յառաջագունէ դատապարտելով։ Ահա գովեստին չարիքը։ Ու ահա չարիքը զոր Սփիւռքը և հայրենիքը կ'ընեն, իւրաքանչիւրը դատ դատ, մեր գրականութեան։ Սփիւռքը, յանուն հայրենասիրութեան ու յանուն կարգախօսի, ընդդէմ իր գրական խղճմտանքին իսկ — համոզուած կամ ասոր, վասնզի այլապէս պէտք պիտի ըլլար յուսահատիլ հայոց գրականութեան ճակատագրէն, ինչ որ ճիշդ է, փաստին մէջէն իսկ իրաւ գործերու որոնք Սփիւռքէն նուաճուեցան և գրականութիւն են, հայ ու դժբախտ, բայց իրաւ գրականութիւն — հիացումներ ոսկեգրելով հասարակ, ասկէ իսկ վար բանաստեղծութեանց, վէպին։ Հանգամանաւոր գրող մըն էր Դերենիկ Դէմիրճեան։ Բայց ահա ձեզի աւելին։ Կաթողիկոսական օծումէն դարձող բարեկամ ու գրող Արքեպիսկոպոս մը ինձի տուաւ Ս. Զօրեանի Պապ Թագաւորը զոր կարգալու ատեն չէր ունեցած։ Դարձեալ պատմական վէպ մը։ Դերենիկ Դէմիրճեանէն փորձառութիւնս հաղիւ միջամտեց։ Ս. Զօրեանը մէկն էր իմ հիացումը գրաւող գրողներէն։ Իր Պոստիւմը հաւաքածոն մեր Մորասանը կը բերէր մեզի։ Գտեր էի իր Ապիսակ Քաղաքն ալ, ուր վէպին անդրանիկ փորձը մեզմ տրամադրութեամբ էի դիմաւորեր։ Անկէ ասդին կորսնցուցի հետքը։ Քսան տարի վերջ Պապ Թագաւորը։ Եղէք իմ տեղը կարգայէ վերջ Վարդանանի։ Բայց ընդունեցէք որ վիպասանի մը հետ է իմ գործը։ Ուրուացան շքեղ վրիպանքները Սամուէին, Գեորգ Մարտիկոսիին, որոնց հեղինակները սակայն գներ էին այդ վրիպանքները մեծափառ ուրիշ յաջողուածքներով։ Ինչ երկարեմ։ Իմ չունեցած աչքերս, մանաւանդ ժամանակս դոհեցի այս եօթը հարիւր մանրատառ էջերը... մարսելու։ Ու ահաւոր էր իմ յուսախարութիւնը։ Ի՞նչն էր որ կը միջամտէր, որպէսզի իրաւ, շքեղ տաղանդէ մը այդ բառակոյտը ծնէր։ Ահա ձեզի իրաւ, անվերապահ տպաւորութիւններ ու մանաւանդ անվերաքննելի վճիռներ։ Կը խորհիմ թէ մօտ է ժամանակը իր արեւելահայերը իրենք ալ պիտի գիտակցին կատարուած աւերին, աւերածին։ Նայիրի Զարեանի վախկոտ ճշգումները, Արեւելահայ գրականութեան վերջին նուաճումներուն շուրջ (որոնք կարգացի Արեւին մէջ) կը թելադրեն այս լաւատես տրամադրութիւնները։ Երեւանի մէջ մարդիկ տակաւին չեն կրնար իրենց մտքին ազատութեանը վստահիլ։ Կը հաւատամ թէ մօտ է օրը երբ ամբողջ արեւելահայ քնարերգու-

Թիւնը (բացառութիւններու մասին ըսեր եմ իմ մտածումը, տեղը չէ հոս գրական քննադատութեան) իրենց իսկ ձեռքով պիտի առաջնորդուի դամբարան: Իմ վերլուծումներուն գիտինը Սփիւռքն էր, յայտարարեցի ատիկա: Ու Սփիւռքը որ բաժնուած է ճակատներու: Ողբերգականը այն է որ հայաստանեան զգացումը մարդիկ շփոթած ըլլան թապուի մը հետ: 1910ին մարդիկ Ալիշան չէին կրնար կարդալ բայց կ'ընդունէին որ սրբապղծութիւն էր այդ զգացումը արտայայտել: Ադ արարքը համազօր էր հայրենադաւութեան: 1945ին, արեւմտեան կադապարներու ծանօթ քերթող մը, որոշ ալ տաղանդով, երբ կը հաւատայ թէ Յովհաննէս Շիրազը, Սարմէնը և այլն և այլն՝ բանաստեղծներ են, կամ ինքզինքը կը խաբէ, կամ կ'ընէ կեղծիքներուն ամէնէն զգուելին: Արեւելահայ բանաստեղծութիւնը ուրանալը ոչ սրբապղծութիւն է և ոչ ալ հերոսութիւն, ինչպէս չեն այդ բաները՝ ուրանալ Սիպիլը, Որբերեանը իբրեւ իրաւ բանաստեղծներ: Այս խոստովանութիւնը այս բանաստեղծները մահաւան չի դատապարտեր, բայց կ'արգիլէ անոնցմով հիանալը, որպէսզի մեր իրաւ հիացումը մնայ մեզի տրամադրելի այս անգամ իրաւ բանաստեղծներու գործին համար: Ահա հայաստանեան գրականութեան դիմաց իմ կեցուածքը խոշոր գիծերով: Այլ ատիկա մատի փաթիթել, խոշորցնել ու վերածել քաղաքական դաւաճանութեան, բան մըն է որ չունի անուն: Բարեկամ մը, հիմա Ամերիկա, կը մեղադրէ թէ ինչու չէի խանդավառ Հայաստանի գրական արդիւնքներով: Լուսահոգի Թորգոմ Պատրիարքը, մահուանը տարին ինծի տուած էր 20 — քըսա՛ն — գիրք Հայաստանի քերթողներէն, Սիոնի մէջ գրախօսելու համար: Կարդացի և ըսի թէ չէի կրնար: Իր զարմանքը ծանր էր ու տպաւորիչ: Մեղմով զգացուցի իրեն թէ ես այդ քսան գիրքերը քսան հազար կտոր կ'ընէի, այնքան անոնք ամէնքը հայհոյութիւն էին իրաւ բանաստեղծութեան: Սիոնը գրական բեմ մը չէր: Համոզուեցա՞ւ պատուական պատրիարքը թէ ոչ, իմ գործը չէր ատիկա գիտնալ, Չպնդեց ու ես գիրքերը առօք փառօք յանձնեցի... Որքոց Յակոբեան Մատենադարանին, որպէսզի քնանային իրենց յաւիտենութիւնը: Ու պարզ որքան յստակ: Բերէք ինծի գործեր, որոնք իմ հիացումը արձակէին: Ըսի թէ ո՞ր օրերու պիտի պահէի իմ մէջ այդ զգացումներուն հեղեղը: Ազատ էք իմ քննադատական գործը կարդալու կամ մերժելու, ըսեր եմ այնքան անգամներ: Կուգայ օրը երբ մեր բոլոր հիացումները կը սմբին: Ինչ կրնայ ընել Օշականը, իր բոլոր կատաղութեամբը, իրաւ գործի մը գէմ, հիացումէն զատ: Այդ իրաւ գործը տուէք ինծի և ոչ թէ աս ու ան թէկուզ համբաւով սլսակեալ մեղկութեան մը ցափռտուքը: